ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 10 07.11. 2014թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հարցերով

1. Թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Եղեգիս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխությունների քննարկման մասին:

3.<<Ռուս ընդ Հար>> ՍՊԸ-ի սեփականության 0,1հա արոտավայրի և 0,1հա էներգետիկայի նշանակության հողերի կատեգորիայի փոփոխության հարցը:
4.Հողի հարկի բազայում Երվանդ Կիրակոսյանի անվամբ գերավճարը ներկայիս սեփականատիրոջը որպես հողի հարկի արտոնություն տալու հարցը:
5.համայնքի զարգացման քառամյա ծրագրի հաստատում:

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1			
2			
3			
4			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

"02" 11 2014թ. N 11 Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 20_րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ կետի 2-րդ մասի դրույթներով , համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1918 –Ն որոշումների և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝3 , դեմ՝0, ձեռնպահ՝0 համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հավանություն տալ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը ,ըստ որի առաջարկվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող.

համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից՝ 0.01 հա այլ հողեր՝ և բնակավայրերի նշանակության հողերից 0.01 հա այլ հողեր՝ փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, " կապի օբյեկտների հողեր" գործառնական նշանակությամբ՝

Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա թվային հեռուստահեռառձակման համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում թվային հեռուստառադիոհեռառձակման ցանցի շինարարության համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Եղեգիս համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ Զ.Ալքասյան

Կողմ՝ Ն.Կարապետյան

Կողմ՝ Գ.Մանասերյան

Կողմ՝ Մ.Նազարյան

Կողմ՝ Պ.Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար՝ Յ.Մկրտչյան

"__"_____ 2014թ

գ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 12 07.11.2014թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

<<Ռուս Ընդ հար>> ՍՊԸ-ին ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԻ
ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27 կետի պահանջներով,համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսված փոփոխությանը, ըստ որի ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ ՍՊԸ-ին պատկանող 0,1հա արոտավայրը/ծածկագիր 10-021-0114-0072/ փոխադրել էներգետիկայի,կապի տրանսպորտի ակոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա: Էներգետիկայի նշանակության 0,1հա հողը /ծածկագիր 10-021-0114-0049/ փոխադրվելու է գյուղատնտեսական նշանակության:
2.Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական համաձայնությանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.			
2.			
3.			
4.			
5			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N13 07.11.2014թ.

Գ.ԵՂԵԳԻՍ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԲԱՁԱՅՈՒՄ ԵՐՎԱՆԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԳԵՐԱՎԵՃԱՐԸ

ՆՈՐ ՄԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ՈՐՊԵՍ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 08.10.2014թ թիվ 02/0321/3035-14 գրությունը Երվանդ Կիրակոսյանի անվամբ հողի հարկի ճշգրտման մասին ,

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11 հոդվածի վերջին պարբերությամբ, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի10-րդ հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ թույլտվություն Եղեգիս համայնքում նախկին սեփականատեր հանդիսացող Երվանդ Կիրակոսյանի անվամբ 7328 ՀՀ դրամ գումարը որպես արտոնություն տալու ներկայիս սեփականատեր Հենրիկ Նիկողոսյանին:

Համայնքի ավագանինների՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1			
2			
3			
4			
5			

Եղեգիս համայնքի ղեկավար՝ Ցու.Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N14 07.11. 2014թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՔԱՌԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16 հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի քառամյա զարգացման ծրագիրը /կցվում է/ :

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.			
2.			
3.			
4.			
5.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳԻՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014-2018թթ.ՍՈՑԻԱԼ -ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Յու.Մկրտչյան

Քննարկվել է համայնքի ավագանու նիստում

2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է քառամյա ծրագիրը

1.Համայնքի իրավիճակի գնահատում

2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:

3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:

4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:

5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները.

Հավելված-1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված-2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ինչ է քառամյա ծրագիրը

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1.Գյուղապետարանի շենք-1,որտեղ գործում է նաև

.Մշակույթի տուն -1

Գրադարան -1

2.Խմելու ջրի ներտնտեսային համակարգ -3միավոր

3. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ- 2միավոր

4.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ -14կմ

5.Ներհամայնքային կամուրջներ-2 հատ

6.Գերեզմանատուն-3 հատ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ , ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.Եղեգիս գյուղը վերաբնակեցվել է 1988թ-ից , բնակիչների զգալի մասը հիմնականում նախկին փախստականներն են գաղթած Ադրբեջանից: Մյուս մասը ՀՀ տարբեր բնակավայրերից , այդ թվում Վայոց ձորի մարզից:Գյուղը գտնվում է ծովի մակ-ից 1640մ բարձրության վրա : Եղեգիսը հիմնականում ապահովված է խմելու ջրով ,Եղեգիսով է հոսում Եղեգիս գետը :Գյուղի տարածքում են Զորաց,Սուրբ Կարապետ,Սուրբ Աստվածածին վանքերը 13-րդ դարում կառուցված:Համայնքի տարածքում գործում է 1 փիեկ. ,կառուցվում է նաև 2-րդ փիէկ : Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է , ամռանը շոգ:Հաճախակի են չորային , երաշտի տարիները , որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 464 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության մոտ 55%-ը:Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.Երեխաներ/0-6/տարեկան-35

2.Դպրոցական/7-17/տարեկան-67

3.16-62տարեկան-310

4.Թոշակառուներ-52մարդ

Գյուղն ունի 128 ծուխ որոնցից 35 ընտանիք ընդգրկված են <<Փարոս>> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով:

Գյուղապետի օգնական-1դրույք

Աշխատակազմի քարտուղար-1դրույք

.գլխավոր- մասնագետ/հաշվապահ/-1դրույք

Առաջատար մասնագետ/ֆինանսիստ/-1դրույք

Գործավարուհի-0,9դրույք

.Հավաքարար-0.9դրույք

Համայնքի ենթակառուցներն են՝

Գրադարան

.Գրադարանավար-0,9դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 7 հոգուց:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառուցվածքների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է հետևյալ կազմով / տես հավելված 2/

1.մշակույթի տուն – 1միավոր

1.1 գրադարան

1.2բուժկետ

1.3գյուղապետարան

2.ջրմուղի ցանց-3միավոր

3.ոռոգման ցանց-2միավոր

Տնտեսական անկման հետևանքով , համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ ,2010-2011թթ. Համայնքը դոնոր կազմակերպությունների միջոցներով կարողացավ վերանորոգել խմելու ջրի ցանցի մի մասը ,: Ներհամայնքային խմելու ջրի ցանցը կառուցվել է 1970-ական թ-ին, մաշվածությունը շատ մեծ է և կա ջրի մեծ կորուստ :Ճանապարհային ցանցը գտնվում է բարվոք վիճակում բացառությամբ համայնքի մի քանի փողոցների, որոնք նորոգման կարիք ունեն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքում գործում է միջնակարգ դպրոց : Դպրոցական շենքը նորոգման կարիք ունի:

Ուսուցչական կազմը-20 հոգի,զգալի մասը բարձրագույն կրթությամբ

Դասարանների քանակը-12

Աշակերտների քանակը-58

Տնտեսական աշխատողներ-6

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը հիմնականում ունի գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա կազմակերպված տնտեսություն: Հարկ է նշել , որ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը աճելու միտում ունի :

Գյուղացիական տնտեսություններում պահվող անասնագլխաքանակը ունի հետևյալ պատկերը.

Խոշոր եղջերավոր -280 գլուխ;

Մանր եղջերավոր-547 գլուխ;

Մեղու – 218 ընտանիք;

Ընտանի թռչուններ /հավ/ - 671 թև

Վերջին տարիներին կտրուկ ավելացել է սեփականատերերի թվաքանակը:

Համայնքի բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս գյուղի տարածքում աճեցնել ընկուզենի, խնձորենի և տանձենի: Գյուղացիական տնտեսությունների հիմնական եկամուտն առաջանում է գյուղմթերքի վաճառքից: Մեծ ծավալներ ունեն ընկույզի, խնձորի վաճառքը: Գյուղացիական առանձին ընտանիքներ զբաղվում են անասնապահությամբ,ունեն զգալի թվով անասնագլխաքանակ:

Եկամտային այս ճյուղը անասնապահությունն է: Գյուղն արտադրում է միս, պանիր, մեղր, ձու:

Հարկ է նշել, որ խնդիրներ կան բնամթերքի արտադրության և դրա իրացման ոլորտներում: Գյուղացին չի կարողանում ռացիոնալ իրացնել իր արտադրանքը և հաճախ ստիպված է լինում ցածր գներով այն հանձնելու գյուղ եկող միջնորդ- վերավաճառողներին:

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐ

Ծրագիր 1

Գյուղը խմելու և ոռոգման ջրով ամբողջական ապահովում

Ներկայումս գյուղը սնուցող խմելու ջրի խողովակաշարի անմխիթար վիճակը նույնպես տարբեր ատյաններում բարձրացված և խիստ

կարևոր հարց է: Համայնքի ղեկավարության և համայնքի առանձին բնակիչների կողմից ամեն տարի կազմակերպվող մասնակի ջրահավաքման և վերանորոգման աշխատանքները չեն կարող կատարելապես կարգավորել հիմնախնդիրը, քանի որ խողովակաշարի մեծ մասը բազմաթիվ տեղերից վնասված է:

ԾՐԱԳԻՐ 2

Գյուղի պատմամշակութային հնարավորությունների լայն օգտագործում

Համայնքի տարածքը հարուստ է պատմամշակութային և բնության տարբեր հուշարձաններով, ինչը լուրջ հնարավորություն է գյուղի տարածքում զբոսաշրջության զարգացման համար: Նույնիսկ ճանապարհային այսպիսի պայմաններում գյուղն ի վիճակի չէ ընդունել զբոսաշրջիկների, որոնք հաճախում են ինչպես միայնակ կամ ընտանիքներով, այնպես էլ խմբերով: Կարևոր խնդիր է հանգստյան գոտիների ստեղծումը համայնքի վարչական տարածքում:

Զբոսաշրջության զարգացումը կնպաստի նաև Եղեգիս անվան շրջանառության և գովազդման նպատակով: Հնարավորություն կտա համայնքին մասնակցելու տարբեր միջազգային ծրագրերի:

ԾՐԱԳԻՐ 3

Համայնքի ներքին նշանակության ճանապարհների ու փողոցների բարեկարգում և սանիտարահիգենիկ վիճակի բարելավում

Այս բնագավառը ևս մնալու է համայնքի ղեկավարության ուշադրության ոլորտում:

Նախատեսվում է յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեում նախատեսել միջոցներ սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով:

Առողջապահության խնդիրների առումով նախատեսվում է սերտ համագործակցություն տարբեր կազմակերպությունների, ապահովագրական գործակալությունների ու բուժհիմնարկների հետ՝

կանխարգելիչ միջոցառումներից մինչև վարակների ու համաճարակների դեմ ամենօրյա պայքար:

Հավելված 1
Եղեգսի համայնքի ավագանու 07.11.2014թ ևn 5 որոշման

ԵՂԵԳԻՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ

Գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը - 6 :
Գրադարանի աշխատակիցների թվաքանակը -1

հ\հ	Անուն ազգանուն պաշտոնը	1 օրվա աշխա-տաժամա-նակը	դրույքը	գումարը ՀՀ դրամ
1	Գյուղապետի օգնական	7	0.9	59524
2	աշխատակազմի քարտուղար	8	1	104000
3	գլխավոր մասնագետ-հաշվապահ	8	1	90000
4	առաջատար մասնագետ	8	1	83000
5	գործավարուհի	7	0.9	59524
6	հավաքարար	7	0.9	59524
7	գրադարանավար	7	0.9	59524
	Ընդամենը			515096

Ընդամենը հինգ հարյուր տասնհինգ հազար իննսունվեց ՀՀ դրամ

Եղեգիս համայնքի ղեկավար՝ Յու.Գրիգորյան

Հավելված 2

հ/հ	Հիմնական միջոցներ	Քանակը	հ/հ			
1	Վարչական շենք	1	15	Էլ.ջեռուցիչ	1	
2	Ավտոկշեռք	1	16	Գազի սալիկ	1	
3	Ցիստեռ-10տ	1	17	Ալեհավաք անտենա	1	
4	Սեղան գր-ն	2հատ	18	ցրիչ	1	
5	Համակարգչի կոմպլեկտ	1	19	Ավտոմեքենա վազ 2121	1	
6	Համակարգչի սեղան	2հատ		Պլաստմասե կոշտ աթոռ	40	ակումբ
7	Մնուցող սարք	1հատ		գրքեր	1393	գրադարան
8	Տպիչ սարք	1հատ		Պոլկա փայտից	4	
9	Շիրկիզվող պահարան	1		Կատալոգի արկղ	1	
10	կախիչ	1				
11	Աթոռներ	8հատ				
12	համրիչ	1հատ				
13	հեռախոս	1հատ				
14	Հեռուստացույց լջ	1հատ				

Եղեգիս համայնքի ղեկավար Յուր. Մկրտչյան